

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԵՅԻՆ-ԽՄԲԱԳՐԱԳԵՏ Մ. ՊԱՆՍԱՍՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

- 1. «Համալսարան» ի Բ. շրջանին առթիւ 349

Ընկերական

- 2. Կինը բանջին մէջ — Լուի Մակիկի — 352
- 3. Մահուան վրայ մտածումներ — Լա Ռոլլի, Փոլ Ասատ, Անարոյ Ֆրանս, Պոլիտ, Տիկին Ալֆօնս Տոսե, Կիւսուլ Լառուսե, Էոժէն Տրիօյսկո, Լոնսլ Թալէուս, Իշխան Ռոյսլ Պոնսիստոք, Էլիշ Վեհայրլե, Փոլ եւ Վիֆրոր Մալկոլիք — 357

Գիտական Լուրեր եւ նորութիւններ

- 4. Ծերութեան կենսաբանութիւնը 364
- 5. Կրօնական սովորութիւններ եւ վարակում 367
- 6. Ժանտատենդը եւ Շիճկաբուժութիւնը 367
- 7. Վիզաստանութիւնն երբ և քանակութիւնը եւ անոնցմէ պահանջուած ոգին՝ զանազան ազգերու մէջ 370
- 8. Աշխարհիս գրքերու վիճակագրութիւնը 371
- 9. «Համալսարան» ի Բ. շրջանին բովանդակութիւնը — Յայտարարութիւններ ... —

Բ. ԶՐԶԱՆ (1901-1902 ԴԵԿՏԵՄԲԵՐ) ԹԻՒ 12

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ — ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ — ՏՊԱՐԱՆ

4, Rue Ortolan - PARIS

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Ի ԵՐՐՈՐԴ ԾՐՋԱՆԸ

Մեր հանդէսի Երրորդ Ծրջանը արդէն սկսած ըլլալու էինք: Բայց «Համալսարան»ի ընդգրկած ընդարձակ ծրագիրը՝ միեւնոյն ծաւալով, ինչպէս ցարդ ունէր ան, կարելի չէր ամբողջութեամբ իրագործել: Երրորդ Ծրջանը սկսելէ առաջ մտածելու կարեւորագոյն կէտ մըն էր այդ, որուն առջեւ կ'արժէր պահ մը կանգ առնել:

Ուստի կը յայտարարենք մեզմով հետաքրքրուողներուն թէ որոշած ենք «Համալսարան»ի ծաւալը կրկնապատակել կամ միեւնոյն ծաւալով Կիսաւեսեայ հսակիսի վերածել ԱՌՍՆԾ սակայն կրկնապատակելու քաժանորդագիրը: Ու այս բարեշրջումը գործադրելու համար «Համալսարան» պիտի յամենայ քիչ մը ժամանակ իր Երրորդ Ծրջանի հրատարակութեան մէջ:

Մեր ընթերցողները ու մեզմով հետաքրքիր հայ հասարակութիւնը մասնաւոր շրջաբերականներով պիտի տեղեկանան «Համալսարան»ի Երրորդ Ծրջանի ծրագրի ու հրատարակութեան թուականի մասին, անմիջապէս երբ մեր այդ առթիւ ունեցած անհրաժեշտ կարգադրութիւնները ու պատրաստութիւնները վերջանան:

Վերջացնելէ առաջ ըսենք որ «Համալսարան»ի վարչութիւնը ու խմբագրական մարմինը կարեւոր փոփոխութիւններ պիտի կրեն այդ նոր Ծրջանին մէջ, ու հանդէսը պիտի խմբագրուի ուրիշ նոր ու կարեւոր ուժերու բարգձմով մը: «Համալսարան»ի Հիմնադիր-Խմբագրապետը այս գեղեցիկ բարելաւով պիտի իրագործէ նախ յօգուտ իր սիրելի ու պատուական ընթերցողներուն, երկրորդ այն անկարելիութեան առջեւ, ուր իր ուժերը անբաւական կը դառնային, իր անձնական ծանր զբաղումներու պատճառով «Գիտական եւ Գրական հանդէս» ին թէ՛ վարչութիւնը, թէ՛ տնօրինութիւնը եւ թէ՛ խմբագրութիւնը միանգամայն վարելու:

Երրորդ Ծրջանին բաժանորդագրութիւնը կը խնդրենք չուղարկել մինչեւ մեր շրջաբերականին հրատարակութիւնը:


Կարգ մը բաժանորդներ իրենց բաժնեգիրները ցարդ մեզի ղրկած չեն: Որպէսզի Երրորդ Ծրջանին մէջ ալ այդ բաժանորդները մեր փոխադարձ վստահութեան արժանան տարրական պարտականութիւն մը կատարած պիտի ըլլան եթէ իրենց բաժնեգիրները ուղարկեն:

Ստիպուած պիտի ըլլանք հակառակ պարագային եւ հակառակ մեր բարեացակումութեան իրենց անունները հրատարակել եւ հրատարակել տալ բոլոր հայ թերթերու մէջ:

Խնք. «Համալսարան»ի



”ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ Բ. ՇՐՋԱՆԻՆ ԱՌԹԻԻ



Այս համարով «Համալսարան»ի Բրդ Շրջանը եւս կը վերջանայ :

Երկու փորձառութեան առջնորդուեցանք մեր այս հրատարակչական եւ հրապարակագրական գործունէութեան մէջ : Նախ համոզուեցանք , հակառակ յոռետեսներու դժուխըմբեր յուսանատութեան , թէ մեր ժողովուրդը , առ հասարակ , ընդունակ է վարժուելու եւ վերջիվերջոյ մարտելու ամէն օրտակար նորութիւն , ամէն բարերար յառաջգիմութիւն : Բայց պէտք է խոստովանինք , միւս կողմէ , որ այդ պատշաճեցումը այնքան ալ դիւրին կերպով կամ թեթեւ զոհողութիւններով չէ որ կարելի է ձեռք բերել : Ընդդէմ մէջ , սակայն , անկարելիութիւն մը չանձնաւորեր , այդ մասին մեր հաւատքը վերջնականապէս գոյացուցած ենք :

Մեր հանդէսի երկու շրջաններու տեւողութեանը միջոցին ուղեցինք հասկնալ թէ՛ որքա՞ն հետաքրքրութիւն կրնայինք արթնցնել անոր բոլորովին լուրջ եւ ցարդ Հայերուն մէջ նմանը չտեսնուած գիտականօրէն խնամուած պարունակութեանը շուրջը : Գոհութեամբ կը յայտարարենք որ , եթէ ո՛չ նիւթապէս՝ գոնէ բարոյապէս , բաւական գնահատելի շարժում մը առաջ բերաւ «Համալսարան»ը , ու անոր ընթերցողները եղան ամէն դասակարգէ , գիտութեան ու յառաջգիմութեան ծարաւի ընտրեալ անձեր : Ու այդ տեղ էր մեր զոհողութիւններու արգիւնաւորութեան խոստումը ու այդ տեղ էր մեր ծրագրի ճշգրութեան վաւերականութիւնը : Որովհետեւ զարգացման հետաքրքրի միտքը ամէնէ գերադանց արտայայտութիւնն է ժողովրդի մը մտաւորական ներկայացուցութեան մէջ , եւ այդ միտքը բեղմնաւորելու նուիրուած ամէն հրատարակութիւն՝ պէտք է նկատուի ճշմարիտ եւ արժէքաւոր գործը , զոր կրնայ երբեք իրեն իտէալ ընտրել իր կոչումին գիտակ հրապարակագիր մը :

« Համալսարան », իրաւամբ, պէտք էր որ հակառակ իր սեղմ ու փոքրաթիւ էջերուն, գրգռէր իր ընթերցողներուն ճաշակը, տալով անոնց նիւթ՝ համալսարանական գասախօսութիւններ, միշտ մտահոգած այն աստիճանաւորութեան մասին որ ուղղակի յարաբերական էր զինքը լըսողներու մտաւոր զարգացման : Գիտական ընդարձակ ծանօթութիւնները զորս « Համալսարան » կը հրատարակէր, անընդհատ, իր ընթերցողները պիտի ծանօթացնէին քաղաքակիրթ աշխարհի մէջ կատարուող նորութիւններուն հետ, ու պիտի թելադրէին զանոնք թօթափելու իրենց անտարբերութիւնը ու մզել մտածելու այն գործօններու կատարած դերին վրայ, որոնք անհրաժեշտ են անհատական եւ հաւաքական գոյութիւններու տեւականութեան եւ բարգաւաճումին : Այսպէս « Համալսարան » ի դերը միեւնոյն ատեն յառաջմղիչ էր, որուն հոսանքէն ինքնաբերաբար եւ առանց դիմադրութեան պիտի տարուէին իր ընթերցողները, եթէ նոյն իսկ այդ վերջիններու մէջ գտնուէին չափազանց դանդաղներ եւ որ եւ է ճիգի անկարողներ :

Մտածումը պիտի գոյանար անտարբերութեան թօթափումէն, ու անտարբերութեան թօթափումը պիտի վանէր տգիտութիւնը եւ ցոյց տար բարեկեցիկ ըլլալու միջոցները : Այդ դերը մտատիպարած էր մեր ամսաթերթը, ու զայդ իր ուժերու սահմաններուն մէջ իրականացուցած ըլլալուն որ եւ է կասկած չունի այսօր :

Մեր երկրորդ համոզումը բաւական ախուր է սակայն հրապարակել հոս : Բայց ըսենք ճշմարտութիւնը հակիրճ կերպով մը . քանի որ հիւանդութեան մը պատճառազրտութիւնն է որ անոր դարմանումին վրայ խորհիլ կուտայ :

Ամէն նոր ձեռնարկ, մեր մէջ, խոշոր խոչընդոտներու կը հանդիպի . այդ խոչընդոտներու մէջ առաջին տեղը կարելի է տալ մեր հնամուտութեան եւ երկրորդ ոչ նուազ կարեւոր տեղը՝ մեր ցեղային յաւակնոտութեան :

Մեր հնամուտութեան . — որովհետեւ մեր դաստիարակութիւնը կամ մեր զարգանալու ձեւը կը մնայ միշտ միեւնոյնը, ու հակառակ իր անպէտութեան՝ իր միօրինակութեան մէջ մեզի մղած է սովորամուտութեան մը : Չենք կրնար, այդ վայրկեանէն, բաժնուիլ անոր բոլոր տափակութենէն ու սիրայօժար կը լսենք մեր հնաւանդ կարպիտներուն, որոնք գիտութեան լոյսը ձէթի լապտերով

մը ցոյց կուտան մեզի: Քայքայելու համար այդ կրթութեան եղանակը մասնաւոր զոհողութեան կարօտ է. բայց ատոր, ընդհակառակը, դժբաղդարար կը նպաստէ այսօր նոյն իսկ մեր մամուլի ճոխագոյն մասը:

Մեր ցեղային յաւակնոտութեան. — որովհետեւ անձնաւորելով ամէնէ յոռի յատկութիւնը, առանց լուրջ զարգացում մը ստացած ըլլալու կամ առանց լուրջ զարգացում մը ջանալ ստանալու, կը կարծենք մենք մեզի արդէն գիտակցութեան ու կատարելագործումի դազաթնակէտը հասած ըլլալ: Այդ վայրկեանէն քամահրանքը ամէն լուրջ քայլի դէմ, այդ վայրկեանէն հետաքրքրութեան ու իրական գիտակցութեան պակասը կը ծաւալի, կը խոչորնայ ու մտաւորական համաճարակ ախտի մը կը վերածուի: Մեր հանդէսի հրատարակութեան պահուն եղան մեծաքանակ հայ մտաւորականներ, կամ լաւ եւս է ըսել կարծեցեալ մտաւորականներ, որոնք ամէն ճիգ թափեցին վարկաբեկ ընել զայն, առանց սակայն զայն հասկնալու արժանիքը ցոյց տալու, լոկ իրենց յաւակնոտութեան ազատ թռիչ տուած՝ չկամենալով ընդունիլ եւ թէ ըմբռնել առանց բանաստեղծ կամ homme de lettre ըլլալու, — տիտղոսներ որ մեր արգահատելի մտաւորականները ինքզինքնուն առատօրէն կը ձօնէին — կարելի է օգտակար խօսքեր ընել ժողովրդին: Բայց այդ ետութիւնները ընկճեցան վերջիվերջոյ ջախջախիչ իրականութեան առջեւ, ու ոմանք ունեցան գոնէ անկեղծութիւնը խոստովանելու որ մեր Հանդէսը իրենց սորվեցուց շատ մը ճշմարտութիւններ, տուաւ շատ մը ծանօթութիւններ, որոնց մասին մինչեւ իրենց անով հետաքրքրութեան երջանիկ օրը բացարձակապէս տգէտ էին:

— « Համալսարան » ը իր գոյութեան իրաւունքը ունէր ուրեմն: « Համալսարան » ը մեր հանդէսներու անտեսած կարեւոր պակասը լրացնելու կոչուած էր ուրեմն: « Համալսարան » ը իր երկու շրջաններուն մէջ ըրաւ ուրեմն այն, ինչ որ չպիտի կրնային ընել իրենց հնաւանդ եւ սպառնալից սովորութիւններով զինուած ո՛չ մեր հանդէսները եւ ո՛չ ալ մեր դատարկամիտ յաւակնոտութիւնները՝ իրենց համոզուած բոլոր տգիտութեամբը:

ԿԻՆԸ ԲԱՆՏԻՆ ՍԷՋ

Կնոջ բաղձը բանտին մէջ, անոր բռնած դիրքը, վա-
րած կեանքը խիստ տարբեր են մարդունէն: Այս վերջինը
այնտեղ կը պահէ իր բնաւորութիւնը: Բացի հազուադէպ
բացառութիւններէ, ան հոն կը մնայ այնպէս ինչպէս էր
իր ազատութեան պահուն. բուն, ծածկամիտ, կոուարար,
մոլութեամբ սնուցարժեք եւ մանաւանդ ծոյլ: Հակառակ ոճ-
բագէտներու (criminaliste) եւ մարդասէրներու փորձած բո-
լոր ճիգերուն հազիւ թէ անոնցմէ բացառութիւններ բան-
տէն զգաստացած ըլլան: Կինը, ընդհակառակը, եղած է
միշտ տիպար բանտարկեալ մը: Փականքի տակ ան ման-
կան բնաւորութիւն մը կը ստանայ, ինքն իրեն կուգայ
եւ կ'ուզուի:

Բանտէն ելլող մարդը իրեն հետ կը տանի խաւարին
ատելութիւն մը դէպի ընկերութիւնը: Այն կինը, որ
մոլութեամբ բոլորովին ապակումած չէ, կը տանի իրեն
հետ՝ իր կրած պատիժին ազդեցութեան տակ, նոր պատիժի
մը երկիւղը:

Քննենք զանազան զգաստաւորական պայմանները կնոջ
մը՝ որ դժբաղդութիւնը ունեցած է արդարութեան ձեռքը
իյնալու, եւ հետեւինք անոր այդ ցաւալի ճամբուն մէջ:

Ու, նախ, ամբաստանութեան տագնապալից շրջանը:
Կինը գրեթէ միշտ ձերբակալուած է յանցանքի մը կամ
ոճրի մը համար որ ծագած է մտերմական բնոյթ ունեցող
պատճառէ մը: Ամէնէ յանցաւորները անոնք են որ որ-
դեսպանութիւն գործած են, ամէնէ նուազ յանցաւորները
անոնք են որ պողութիւն մը ըրած են, յաճախ պարզապէս
թեթեւ փողօններ: Բոլորովին բացառիկ է որ կին մը մար-
դասպան ըլլայ:

— Կինը արդէն բանտարկուած: Այն շարաթներու եւ
յաճախ ամիսներու միջոցին որոնք կը տեւեն անոր ոճրին
տեղեկագրութիւնը ընելու եւ պարագաները ճշգրտու հա-
մար, կինը, ըստ իրաւաբանական կոչման, ամբաստանու-
թեան վիճակին մէջ կը գտնուի: Դժուարին շարչարանք:

Դատարաններու յարակից բանտերու մէջ, ուր գործը կը ստուգուի, կինը կրնայ ընդհանուր ռեժիմին տակ դրուիլ, այսինքն հաւասարապէս ամբաստանուած կիներու հետ խառնուիլ. բայց եթէ բանտը խցիկներ միայն ունի, կինը կը փակեն միայնակ՝ խուցի մը մէջ: Ինչ որ ապաշխարական լեզուով կը կոչուի անհատական բանտարկութեան բէժիմ: Այս կամ այն բէժիմը իրեն լաւ կողմերը ունի, թէև խցիկային բէժիմը, բարոյապէս եւ իրապէս, լաւագոյն համարուած ըլլայ: Բայց եթէ այս մասին որ եւ է կասկած չկայ մարդոց համար, շատ մը բարեմիտ հոգիներ կը նկատեն թէ ամբաստանութեան տակ եղող կիներու համար, մանուսնոց երբ ամբաստանութիւնը ծանր է, ընդհանուր բէժիմը ունի առաւելութիւններ: Ստուգողական շրջանը իրաւամբ լլկիչ է: Կինը ընկերի, խօսակցութեան, իր սիրտը բանալու, զգացածը բացատրելու պէտք ունի: Կը մոռնայ իր ճիւղային գրութիւնը կամ առնուազն ընդմիջա չի խորհիլ իր ոճրին վրայ՝ իրեն վիճակը ունեցող ուրիշ զժբազդ կիներու ընկերակցութեան մէջ: Մինչ մարդիկ, ամբաստանութեան տեւողութեան, բնաւ չեն մտանդիր աշխատելու — աշխատանքը պարտաւորիչ չըլլալով այդ շրջանին մէջ — կիները առհասարակ չեն փափաքիր օգտուիլ դատարկապորտութենէն: Աշխատիլ կ'ուզեն անոնք: Մխիթարիչ ասեղը կը խնդրեն անոնք անյայտալ:

Բայց եթէ բանտը խցիկային է՝ փակուած են անոնք նեղ սենեակի մը մէջ, լքուած իրենք իրենց, լուծեան մէջ: Այդ առեն իրենց ոճրին յիշատակը զանոնք կը պաշարէ, ու գիշեր ցորեկ կը մտանդէ: Ու այդ այնքան սոսկալի շրջան մըն է, զոր պէտք է անցնել, որ պահապանները խուցին դուռը յաճախ բաց ձգելու կը պարտաւորին: Սանդ ստուերի մը նման պահապանը իր գիշերապահութեան պաշտօնը կը լրացնէ: Մարդկային էակ մըն է որ աչքի ու ձայնի հասողութեան մէջ կը գտնուի: Անկարելի ըլլալով շատ արտասուել, անկարելի ըլլալով մանաւանդ անձնասպանութեան գիմել՝ մէկով այն միջոցներէն, զորս բանտարկուած կիները այնքան յաջողակ են գտնելու՝ լըռութեան մէջ, եւ որոնք սակնու վրայ կ'ընեն ամէնէն նախատեսութիւն: Բայց գիշերները սարսափեցուցիչ են, կինը, միայնակ, կը վախնայ: Այդ ամէնէն անբացատրելի

եւ բոլորովին անսահմանելի զգացումն է որ զոյութիւնն ունի: Սափանուած խուցի մը մէջ, վանդակուած բանտի մը մէջ, ուր վտանգի որ եւ է երկիւղ չկայ, կինը կը գողայ վախէն, գիշեր ատեն: Վախ՝ ի՞նչ բան է: Անկարելի է զայդ ըսել: Կը վախնայ ան, ու կը քնանայ առաւօտեան դէմ միայն, երբ արշալոյսը սկսած է երեւիլ: Կապարեայ քուռն մը զայն կը նուաճէ այդ ատեն՝ ցաւագին տագնապի ժամերէ յետոյ:

— Ամբաստանութեան մղձաւանջը եւ անստուգութիւնը վերջացած են. յանցաւորը դատապարտուած է: Ենթադրենք յոռեգոյն պայմաններ. կինը դատապարտուած է տաժանակիր աշխատութեան, կամ ժամանակաւոր, հինգէն քսան տարի, կամ ցկեանս: Կը թուի նախ թէ անսահման ընկճումը պէտք է զայն ջախջախէ: Սխալ է սակայն այդ: Ստուգութիւնը յաջորդած է անստոյգ դրութեան: Գիտէ ան հիմա թէ ի՞նչ է իրեն վիճակուած: Որքան ալ այդ բաղդը սարսափեցուցիչ ըլլայ, անոր մեծութիւնը կը ճանչնայ: Ամօթի զգացումը կ'անհետանայ: Համակերպումը անոր կը յաջորդէ:

Տաժանակիր աշխատութեան պատիժը կրնե՞րու համար կը գործադրուի Ֆրանսայի մէջ իսկ: Անոնք չեն տեղափոխուիր: Կրնե՞րու համար զոյութիւնն ունեցող երեք կեդրոնական բանտերուն մէջ, Քլէմոն-տը-ՂՈւազ, Ռէնն եւ Մոնփէլիէ, պատիժին բոլոր աստիճանները, մէկ տարուան բանտարկութենէն վեր մինչեւ ցկեանս տաժանակիր աշխատութիւնը, կը գործադրուին: Ու, հետաքրքիր պարագայ մը, խիստ քիչ տարբերութիւն կայ՝ բացի անտղութիւնէն, այդ պատիժներուն մէջ: Կերակուրը, շաբաթական մօտաւորապէս մէկ աման մսի զանազանութեամբ, ամէնքին համար միեւնոյնն է. պակեղու, յարմարութիւնը համանման է, ինչպէս նաեւ զգեստը: Հազիւ մարդ կը կասկածի թէ իրական տարբերութիւնը գրամական է՝ պատիժներու միջեւ: Բանտարկութեան դատապարտուած կինը, երբ իր առաջին տարին է, կը ստանայ իր վաստկածին կէսը: Տաժանակիր աշխատութեան դատապարտուածը կը բաժնէ իր աշխատութեան արդիւնքին երեք տասներորդը: Այսպէս՝ գողութեամբ դատապարտուած կինը, օրինակի համար երկու տարուան բանտարկութեան, որ կը շահի օրական մէկ ֆրանք իր աշխատանոցին մէջ, կը պահէ իր վաստա-

կին կէսը 50 սանթիմ կամ 10ը սու : Տաժանակիր աշխատութեան գատապարտուածը իր վաստակին միայն երեք տասներորդը կը պահէ , այսինքն երեսուն սանթիմ : Տաժանակիր աշխատութեան պատիժը , իրապէս , կը կայանայ շահու ակարացման մը մէջ եւ ոչ ուրիշ բանի : Պատիժին սեւեռութիւնը եւ անոր անուանարկիչ բնոյթը կը կազմեն տաժանակիր աշխատութեան եւ զգաստացուցիչ բանտարկութեան միջեւ գոյութիւն ունեցող գնահատութիւնը , երկուքն ալ միեւնոյն կեդրոնական բանտերուն մէջ գործադրուելով :

— Պէտք չէ մտածել որ կիներու գրութիւնը , վերը յիշուած երեք կեդրոնական բանտերու մէջ , դժնգակ ըլլայ : Ռէժիմը ոչ մէկ անտանելիութիւն չի ներկայացներ : Ատտուն , գաւաթ մը սուրճ կտոր մը հացով , անոնց կը տրուի անկողինէն ելլելուն , ամառը ժամը 5 ին , իսկ ձմեռը 6 ին : Ժամը իննին առատօրէն լիցուած խորունկ պնակ մը ապուր կը տրուի անոնց՝ չափազանց մաքուր սեղանատուններու մէջ : Երկու անգամ շաբաթը՝ 150 կրամ միս կ'աւելցուի այդ ապուրին : Իրիկունը , ժամը 4 էն 5 , խոշոր աման մը բանջարեղէն կը ծառայուի անոնց . հացը եթէ բոլորովին տրամադրելի չէ գոնէ բաւական առատութեամբ կը տրուի եւ խիստ համեղ է : Իւրաքանչիւր օր ամէն մէկին 700 կրամ հաց կը տրուի , բայց ապուրին մէջ գրուած հացը եթէ հաշուուի 750 կրամը կ'անցնի : Այդ հացը խնամքով թրուած է եւ պատրաստուած է մանրօրէն մաղուած ալիւրով , որպէսզի անոր գոյնը խիստ սեւ չըլլայ : Ծաշասրահները , կիներու կեդրոնական բանտերուն մէջ , փայլուն մաքրութիւն մը ունին . բանտարկեալներն են որ անոնց մաքրութեան գործը ստանձնած են , ու այդ բանին մէջ եւս կիները խիստ բարձր են մարդոցմէն որ կը գոհանան յաճախ նուազ մանրամասն մաքրութեամբ մը :

Գորշադոյն կամ մոխրագոյն թանձր զղետը (ապս) իրաւամբ որ եւ է հրապուրանք չունի , բայց տաք է եւ առողջարար . հասարակ կտաւեայ գլխարկով մը կը ծածկեն գլուխին , ու իգական սեռի յատուկ պջրանքը , որ երբեք չի մոռցուիր , այդ յարգարանքէն կը յաջողի լաւապէս օգտուիլ : Անոր ծալքերը հանձարեղ կերպով ուղորուած են եւ յաճախ փոքրիկ ու քմածին հանդոյց մը կը ցցուի գլխի մազերու խողովին վրայ , որ ,


հակառակ անհրճ կարծիքին մերատ տեսած չունի: Կաւ վարք ունեցող բանտարկեալուհիները կը ստանան նոյն իսկ այլազան ու փաղաքշիչ գոյներով գլխի թաշկինակներ: Այդ բանը նախանձելի վարձատրութիւն մըն է:

Անկողինը լաւ է, ու երկու վերմակներ, որոնցմէ մին բրդեայ է, կը պահպանեն բանտարկեալը ցուրաին դէմ: Ձուրը կը տրուի այնքան քանակութեամբ որքան հարկաւոր է մաքրութեան պահպանումին եւ առողջապահութեան:

Կիները, հակառակ մարդոց, մոլութիւններու սնապարծութիւնը չունին: Չեն պարծիր բնաւ իրենց գործած չարիքներով. մարդիկ յաճախ ատելի պարտութիւն մը կը զգան ինքզինքնին կատարեալ ոճրագործներ ներկայացնելով. կը պարծին յաճախ նոյն իսկ երեւակայական ոճիրներով: Կիները, ընդհակառակը, խիստ քիչ կը խօսին իրենց դժբաղդութեան վրայ. կը ջանան բացատրութիւններ գտնել եւ իրենց բոլոր լաւագոյն հիգը կը թափեն այդ տեսակէտով: Կին մը կը խոստովանի բաւական դիւրութեամբ իր գործած ոճիրը, բայց երբեք ինքզինքը բարոյապէս յանցաւոր չի կարծեր. ու այդ համոզումը յաճախ խիստ անկեղծ է. ինքն իրեն մեղաց արձակումը կուտայ: Եթէ իր մանկութեան ատեն բարեպաշտ եղած է, մեղաց թողութեան հաւատքը զայն կը մխիթարէ ու կը զօրացնէ. ան կը դառնայ երբեմնի փոքրիկ ազլիկը, ու իր մտածումը կը վերադառնայ այն երջանիկ ու կարճատեւ ժամանակին վրայ, ուր եղած էր պարկեշտ եւ խելօք:

Երբ մարդ կ'ապրի այդ խեղճ արարածներուն հետ՝ իրական գթութեամբ մը կը համակի. ինքզինքին կը հարցնէ, ինքն իր մէջ, թէ հասկնա՞լ ամէն բան կնոջ մօտ, չի՞ նշանակեր արդեօք ամէն բան անոր ներքէ:

ԼՈՒԻ ՄԱՆԻՆԻ



ՄԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Այն քննութիւնը զոր բացած էր վերջերս « Ռեվիւ » հանդէսը մահուան փափուկ խնդրոյն վրայ — հարցում դրնելով թէ՛ . « Պի՞ն ցաւեի՞ք երբ մեռնեի՞ք եւ ինչ՞ու համար » — առիթ տուած էր շատ մը նշանաւոր մարդոց այդ մասին իրենց կարծիքը յայտնելու , ինչ որ մեր ժամանակի հոգեկան վիճակին ճանաչողութեան շահեկանութիւնը կ'ընծայէ : Մեր ընթերցողները նուազ գոհ չպիտի ըլլան , երբ այդ մտածումներու կարեւորագոյնները իրենց ներկայացնենք . քանի որ իրենք եւս , ինչպէս ամբողջ աշխարհը , այդ չարաշուք վախճանին առջեւ սոսկում պիտի զգան , համակերպումի սոսկում մը :

« Մահը , ինչպէս ծնունդը , բնութեան մէկ գաղտնիքն է : Ամէն փիլիսոփայութիւն հոն բաղխած է , այնտեղ ջախջախուած է : Մահը էակին ամբողջական ոչնչացումն է թէ՛ անոր մէկ կերպարանափոխութիւնը : Մուհամմէտ արդեօք իրաւա՞մբ կ'ըսէ երբ կը գրէ . « Անոնք որ ապառնի կեանքը կ'ուրանան , մոլորած են » : Ու ի՞նչպէս պէտք է մեկնաբանել Յոբի գրքին սա տունը . « Ինչպէս որ ամպ մը կ'անցնի ու կ'անյայտանայ , նոյնպէս ալ մարդը , որ գերեզման կ'իջնէ , երբեք անկից չպիտի դուրս բարձրանայ » : Կը թուի թէ մահը այն բանն է որուն վրայ ոչ ոք կրցած է անհեթեթութիւն մը ըսել : Քրիստոսնայ , ստոյիկեան , նիւթապաշտ , ազատախոհ , հոգեպաշտ , ամէնքն ալ իրենց ուզածին պէս զայն կը նկատեն , անկէ կը վախնան , զայն կը սիրեն կամ բնաւ անով չեն մտահոգիր : Իրենց աչքին առջեւ մահը յաւիտենական կեանքի մը սկզբնաւորութիւնն է , դաժան արկած մը , այն դուռը , վերջապէս , որ կը տիրապետէ անթափանցելի անձանօթին վրայ :

Հակառակ իր կամքին , խորհողը կը վարանի հանդերձեալին հարցական նշանին առջեւ : Կը դիմէ Քրիզոստոմէսին Պապոսին , Յիսուսէն Նիցչէիին , չի գործածեր տրակարներու սփոփանքը , այսինքէ բնաւ չի մտածել մահուան վրայ . կրօնքներու եւ փիլիսոփայութեանց օրէնքները իրեն համար չեն խորտակած գաղտնիքին կնիքը : Ու իր յոյսին մէջ լլկուած՝ կ'ենթադրէ , ինչպէս Մարք Օրէլ , թէ մեռնիլը միեւնոյն բանն է ինչպէս մանկութենէ

երիտասարդութեան անցնիլը եւ յետոյ ծերանալը, թէ խելացի մարդու մը անկ է ո՛չ թեթեւամտութիւն եւ ո՛չ կրքոտ կերպով, ինչպէս նաեւ ո՛չ հպարտութեամբ եւ ո՛չ ալ արհամարհանքով նայիլ մահուան վրայ, հապա՛ սպասել անոր ինչպէս Բնութեան մէկ անխուսափելի գործողութեան:»

Այսպէ՞ս կ'ըմբռնուի արգիօք մահը. աչքէ անցնենք ուրիշ կարծիքներ:

— ՓՈԼ ԱՏԱՄ կ'ըսէ.

« Երբեք մեռնելուս վրայ չզիտի ցաւէի, եթէ միայն կեանքին մեզ շնորհած ախորժանքը թողուլ հարկ ըլլար, ինչ որ հազուադիւր է վշտերու յարանորոգ բազմութեան մէջ: Բայց ես հաւասարապէս մահուան եւ կեանքի վրայ հաւատք չունիմ: Կ'ընդհնմարեմ շարք մը միքրոպային այլակերպումներ, անհաշուելի եւ դժնդակ ստորաբաժանում մը իմ կարողութիւններու՝ պասիւններու եւ մանրակենսիկներու ամբոխումներու մէջ, որոնք, իրենց կարգին պիտի տանջուին, տառապին, յուսան եւ յուսախափին, դոյզն բայց հաւասարապէս աններելի համեմատութիւններով: Ուրիշ խօսքով, ինձ կը թուի թէ մահը հանգիստ, ոչնչացում չի խոստանար, այլ անհեթեթ եւ մթազին յարածնութիւն մը՝ որուն խազերէն կը վախնամ: Այս կեանքին մէջ՝ գիտեմ դոնէ թէ ի՞նչ բան ինձ կը սպասէ, նիւթական վիշտեր, տքնաջան աշխատանք, բարեկամներու թշնամանք, ոտխներու քինախնդրութիւն, մերձաւորական հաշիւներ եւ արհամարհանք, որոնք իմ ճիգերուս համար անազդու կը գտնեմ: Յետո՞յ: Տակաւին աւելի դէշ չզիտի ըլլա՞յ: Գիտութիւնը կը պատասխանէ. « Յայտնապէս »:

« Յ. Գ. — Պիտի պատճառաբանեն. չենք յիշեր մեր մարդկային ծննդեան յառաջընթաց վիճակները, ուրեմն չզիտի կրնանք յիշել նաեւ ներկայ վիճակը, ո՛չ ալ զայն բաղդատել յաջորդներուն: — Անտարակոյս, բայց այդ արգելք մը չէ որ նուազ չկրենք ամէն տեսակ նեղութիւններ, որ մեզ խոցոտեն, թէեւ զանոնք չբաղդատէինք նախընթաց անժանութիւն վիճակներուն հետ: »

— ԱՆԱԹՈԼ ՖԻԱՆՍ մատնանիշ ըրած է.

« Մարդկային կեանքը լեցուն է վիշտերով ու երբեք դադար չկայ անոր ցաւերուն: Բայց այն միւսը, ինչ որ ալ ըլլայ, աւելի բաղձալի է քան կեանքը, միթիւն է եւ

ծածկուած ամպերնու տակ . ու մենք կը սիրենք առանց իմաստութեան այն կեանքը որ կը փայլի երկրի վրայ, որ լուսնեան անկից զատ ուրիշ մը չենք ճանչնար եւ թէ ընդդեմնեայ իրերը մեզ յայտնուած չեն : Ի զո՛ւր կը վրդո՛վինք ստայօղութիւններով » :

Այսպէս կը խօսի Ֆէտէրա թագուհիին դայեակը : —

— ՊՈՒԻԷՕ կ'ըսէ .

« Ի՞նչպէս կարելի է ցաւիլ մեռնելուն վրայ , քանի որ որչափ ատեն որ մեռած չենք կը յուսանք ապրիլ , եւ մէկ անգամ մեռած այլեւս չենք դիտեր թէ ինչ ենք : » —

— Տիկին ԱԼՅՕՆՍ ՏՕՏԷ կը գրէ .

« Անոնք , որոնց վախճանականը կանուխէն կը հնչէ , միակ դժնդակ վիշտ մը ունին , այն է բարոյական պատասխանատուութիւններու լքումը , թողուլ չաւարտած մեծ պարտք մը , այսինքն զակի մը դատարարակութիւնը , մտաւոր կամ բարեսիրական գործ մը՝ ինչ որ անհրաժեշտ կը դատուէր յօգուտ անոնց որոնք կը թողուին , որոնք , պիտի ըսէի , կը լքուին այդ մեկնումով :

Այո՛ , այդ տեղ է միայն , իմ կարծիքով մահուան կծու ցաւը պարտաճանաչ եւ անձնուէր էակներու համար : » —

— ԿԻԻՍՏԱՎ ԼԱՌՈՒՄԷ կը պատասխանէ .

« Ֆրանսացի բանաստեղծ մը , Մէյնառ , եթէ լաւ կը յիշեմ , երկու դար կայ որ պատասխանած է այդ հարցումին : Կ'ըսէր մահուան առթիւ թէ պէտք չէ « անոր բաղձալ եւ ո՛չ ալ անկից վախնալ » : Լա Պօնթէն կը կարծէր թէ « խելացին պէտք է որ միշտ իր ծրարը պատրաստ ունենայ մեկնելու համար » : Վերջապէս , դուք գիտէք պարոն , որ Անվէրսի մէջ Փլանթէն թանգարանը այցելողներուն հնչեակ (sonnet) մը կը բաժնեն , գեղեցիկ հնչեակ մը , որ կը տպուի հին տպագրական մամուլներու վրայ , եւ որ կը համառօտէ ձեր քննութեան բոլոր փիլիսոփայութիւնը : Ասկից վերջ , բաւական է ձեզ ըսել թէ այդ փիլիսոփայութիւնը իմն է : » —

ԷՕԺԷՆ ՏՐՄՕԼՏԷՌ կ'ըսէ .

« Առաջին անգամն է — ու այդ բանը միակը կարծեմ պիտի ըլլայ — որ ես կը ցաւ իմ Ֆրանսական Ակադեմիայէն չըլլալու : Պիտի կրնայի ձեզ պատասխանել այն ատեն թէ անմահ էի . անմահ չըլլալուս մեռնելուս պիտի ցաւիմ : Եթէ տկարացած կամ հիւանդ չէ՛ ամէն էակ որտովին կը

ցանկայ կեանքին ու լոյսին եւ սոսկում կը զգայ դատարկութենէն ու ոչնչութենէն : Ինչո՞ւ համար : Մէկն է այս այն խորախորհուրդ օրէնքներէն , որոնց պատճառները մեր սահմանափակ հասկացողութենէն կը խուսափին : « Աստուծոյ կամքն է » կը կրկնեն միշտ հաւատացեալները : Ես , չեմ գիտեր եւ կ'ընդունիմ թէ կեանքին , ինչպէս անոր ցանկութիւններուն գաղտնիքը փակուած է երիցս պղնձեայ խորհրդաւոր դռան մը ետին , որուն առջեւ առանց երբեք զայն կիսովին իսկ բանալ յաջողելու , մարդիկ կը տարածեն իրենց գիտութիւնը , կը քարոզին իրենց պաւանանքները եւ փիլիսոփայութիւնը » :—

— ԼՈՒԱՆ ԹԱՅԵՍՏ կը բացատրէ .

« Յաւ զգալ մեռնելուս համար այնքան սին կը թուիր քան ծնած ըլլալուս համար ցաւիլը : Մարդը , գիտակցութեան վայրկեանի մը զսպանակը — պայծառ փայլակը երկու խաւարային անհունութեանց միջեւ — տիրելու տեղի չունի ոչնչութեան մէջ իր ծծուելուն համար , որքան ուրախանալու լոյսին առջեւ իր ծնունդովը . ինչ որ կըրնայ աւաղել , ոչ առանց ճշմարիտ իրաւունքի , այն է իր բաւական չափիլը , բուական չսիրուիլը , բաւական չսուրվիլը , բաւական չկուելիլը , ազատ ու զօրաւոր գոյութիւն մը ձեռք բերելու չյաջողիլը՝ թէ իրեն եւ թէ անոնց համար որ իր ետեւէն կուգան : Գիտնական , արուեստագէտ , գործաւոր , մտածող , ո՛չ մէկը կրնայ ինքզինքը փառաւորել իր մտաւոր ու ֆիզիքական կարողութիւնները իրենց վերջին աստիճանին հասուցած ըլլալուն , առւած ըլլալուն աշխարհի այն անբողջ աշխատանքը , որ իրաւամբ իրմէ կը պահանջուէր , ջղուտ բազուկով մը եւ անխռով սրտով մը փոխանցած ըլլալուն « փրօմէթէ » եան գիտութիւնը ապագայ սերունդներուն : Գալով առանձնաշնորհեալներուն , անպէտ հարուստներուն , լիրք-չահագործողներուն , թուլամորթ շահագործեալներուն , իրենց էութիւնը հազիւ կակղամորթ է մը վերջ կը հաշուի , որովհետեւ կարելի չէ զայն գործածել նոյն իսկ պարարտահողի պատրաստութեան :

Անձնասիրութիւնը , քաղցի դէմ պայքարը , բնական եւ ընկերական մրցակցութիւնը կը սպառեն մարդկային գործունէութիւնը սահմանաւորող եռեսուն կամ քառասուն տարիներու լաւագոյն մասը : Ինչ որ կը մնայ՝ Մարդուն եւ Տիեզերքին հետ անշահախնդիր շփում մը ունենալու

համար, ապրելու ճանճրոյթը ստանձնելու արժանիքը իսկ չի ներկայացնել: Շամֆուի խօսքը բնական կերպով մը կը յիշենք այստեղ. « Կեանքը չարիք մըն է, զոր կը մեղմէ քունը ամէն տասնըվեց ժամը անգամ մը. թոյն մըն է ան: Մահը դարմանն է »:

Քրիստոնէութեան անկ է կեղտոտել մահը ինչպէս որ անպատուած է կեանքը: Զինքը արտադրող գործարաններու յետամնաց (survivant) մտքի մը այդ կոշտ ենթադրութիւնը, վերագրած դէպի ամէնէ նուազ քաղաքակրթուած խուժաններու անասնութեան, շինած է գոյութեան նախատեսուած լուծմամբ՝ երկիւղի եւ ամօթի ընկճող թափօր մը, որոնք խիստ կը ստորադասեն՝ սեւամորթերու ամէնէ վերջինէն ալ, քրիստոնեան: Ոչինչ այնքան ողբալի է որքան քրիստոսապատկաններու « բարեբարոյ մահը »: Երկիւղի, վատ համակերպութեան եւ ապուշութեան յերկրանքնե՛ր: Ընդհակառակը հեթանոսական ոստանները բարձրացան իրենց մեծափառութեան (enthanaie), առ ի արտայայտութիւն իրենց մաււորական կորովին եւ առողջ առաքինութիւններուն: Սոկրատ՝ ու աւելի յետոյ քրիստասարգ Կատոն, միանգամ ընդմիշտ կը նուիրագործեն, իրենց մեծանոցի վախճանովը, մրցող ուժերու գէմ դիւցազնական դիմադրութիւնը ու աստուածներէն ազատագրող արհամարհանքը: Իրենց մահը սակայն չի կատարուիր առանց ներկայացման մը պատրաստութեան (mise en scène). Իր համախմբուած ընկերներուն առջեւ, ապողոնեան պարիկին շուրջը, Մերու Տիւ Ֆեսոնը կրկնապէս կը սխալի քարոզելով հոգեոյ անմահութիւնը եւ իր վերջին օրը խեղձօրէն դերասանելով: Անոր անձին մէջ չէ որ գիտական միտք մը պիտի մտածէ փնտռել օրինակներ որ անոր պիտի ուսուցանեն արհամարհել գերեզմանին սոսկումնիրը: Ակադեմիայի կամ Փօսթիքի (Ստոյիկեան դպրոց) փիլիսոփաները երբեք իրեն օգնութեան ձեռք չպիտի երկնցնեն: Բայց ան պիտի դիտէ կենդանին իր վսեմ համաձայնութեան մէջ աշխարհի ուրուագծովը, լքանելով ինքզինք անողորելի բաղդին եւ փակելով իր աչքերը առանց տըրտունջի, երբ տիեզերական Կեանքը կը կլանէ իր վաղանցուկ էութիւնը Լինելու բովին մէջ: Իր անուան արժանի մարդ մը երբեք պէտք չէ տենչայ « իմաստունին » մահուան, դեռ աւելի նուազ « սուրբի » մը, այլ սպասել շուն մը պիտ

մեռնելու պատուին, իբր ամէնէն ազնիւ վարձատրութիւնը դէպի բանավարութիւնն ու գեղեցկութիւնը ձգտող մնայուն ճիգի մը:» —

— ԷՄԻԼ ՎԵՐՀՍՅՈՒՐՆԻ կարծիքը .

« Թէ պիտի ցաւիմ մեռնելո՛ւս: անտարակոյս, ու կարգ մը պատճառներու համար, որոնցմէ առաջինը պիտի ըլլայ այլեւս չկարենալ աշխատելու գործի մը (œuvre), այնպէս ինչպէս պիտի բաղձայի զայն տեսնել հետզհետէ անոր մեծնալը իմ եւ ուրիշներու ուրախութեանը համար: Կեանքը խելայիզօրէն կը սիրեմ, կը սիրեմ զայն մինչև իր պատճառած եւ վիշտերուն եւ զժբազդութեանց եւ նոյն իսկ ամէնէն զժուրատար տագնապներուն մէջ: Յուսահատութեան ծոցն իսկ կը դտնուի չարչարուելու, իր ճիշերուն եւ արտասուքներուն յաղթանակելու հաճոյք մը: Մահը ինձ կը թուի սոսկալի, դաւաճանող, անողոք եւ անարդար: Գլուխ-գործոցը, որ ինքնին մարգն է, պէտք էր որ անկից յարգուէր:» —

— Իշխան ՌՈԼԱՆ ՊՈՆԱՓԱՌԹ կը յայտնէ .

. . . « Այնպիսիին համար, որ կը հուսաւայ ստեղծիչ Աստուծոյ գոյութեան, պերագոյն դատաւոր մարդկային գործերուն, սիրոյ կապերու ու բարեկամութեանց, Մեծ Բաժանարարին գալուստը չի կրնար եւ պէտք չէ որ երկիւղ մը առթէ . որովհետեւ, երկրային սուրբ կեանքէ մը յետոյ, անիկա ուղղակի կը դիմէ դէպի անվախճան երջանկութիւնը, որ խոստացուած է հետեւեալ վստմ խօսքերուն մէջ « Ես եմ յարութիւն եւ կեանք » — (Ego sum resurrectio et vita):

Գալով անհաւատին (agnose), տեսնելով մտածուածի հսկայական աշխատանքին մէջ վերերեւոյթ մը միայն կենդանի նիւթին՝ կազմուած մեր հողագնդին մակերեւոյթին վրայ պարզ բորբոսի վիճակին մէջ, մահ կոչուածը անոր համար գոյութիւն չունի, այդ բանը պարզապէս վերադարձուած ազատութիւնն է հիւլէններուն երթալու վերստին ձուլուելու համար մեծ Ամբողջութեան հետ . . . « ու կեսօրի փոշիները կը դոցեն թերեւս այսօր հին պատի մը ճեղքերը »:

Տեսնելու այս երկու ձևերուն մէջ, որոնք միեւնոյն եզրակացութեան կ'առաջնորդեն, այս սողերը ստորազրուղը պիտի վարանի ընտրանք մը ընել, որովհետեւ իր միակ աւաղանքը պիտի ըլլայ իր հաին թողուլը այն

էականը , որոնք իրեն համար թանկագին են . . . » —

— Փօլ եւ Վիլֆոր ՄԱՌԿԸՌԻԹ կը գրեն .

« Բոլոր ժամանակներու գրականութիւնը կը հաստատէ կեանքի սէրը եւ մահուան աւազանքը . էօրիփօտն սկսած , որուն ձերունի Ֆէրէսը կը յայտարարէ Այսէսքի մէջ . « կը մտածեմ որ երկրին տակ անցուելիք ժամանակը երկար է , եւ թէ կեանքը կարճատեւ է , բայց քաղցր » , — Սկսած Ովրասիոսէն (Հորաս) որ պէտք է տեղ մը ըսած ըլլայ . « Թո՛ղ ըլլամ կաթուածուա (goutteux) , աղուփեռուա (brèche-dent) , ծմբաբարձ (cul-de-jatte) բաւակա՛ն է որ ապրիմ » — մինչեւ Լա Ռոշըֆուքօ . « Արեգակն ու մահը չեն կրնար զիրար պիտել սեւեռօրէն , » — մինչեւ Փասկալ . « Ինչ որ գիտեմ այն է որ պիտի մեռնիմ ի մօտոյ . բայց ինչ որ բոլորովին կ'անգիտանամ այդ մահն է նոյն իսկ՝ ուրկէ չպիտի յաջողիմ խուսափիլ : »

Բոլոր անկեղծ մարդիկ ափսոսալով պիտի համակերպին մահուան , թող թէ մահուան երկիւղը զանոնք մագնիսացնէ , — յիշեցնելով ոչնչութիւն մը կամ քաւիչ վերակենդանութիւն մը , — թող թէ կեանքը իրենց բաղձալի ըլլայ կամ պարզապէս զանոնք հիացնէ՝ իբր գործօն ուժ , աղբիւր զգայնութեան , փոխադարձ համակրութեան . թող թէ որովհետեւ աւոնք չպիտի ուղեն երբեք անհետանալ իրականացնելէ առաջ բարոյական կեանք մը գեղեցիկ ու ճշմարիտ , կամ լաւ եւս արւեստի կեանք մը որ անցողաբար պիտի ազատէր իրենց անուներ մոռացութենէն եւ որ պիտի նպաստէր այն Յառաջդիմութեան որ պիտի ազատարէ օր մը ինքնագէտ մարդկութիւնը :

Ու սակայն այնքան թանկագին այս կեանքը կան վայրկեաններ , ուր գրեթէ առանց կասելու ու ցաւելու՝ պիտի նուիրուէր մեծ գործի մը , դիւցազնական նպատակի մը , սիրային զոհողութեան մը , եւ վերջապէս տակաւին աւելի փոքրապէս խուսափելու համար սեւ յուսահատութենէ մը , բարոյական վշտէ մը , ֆիզիքական չարչարանքէ մը , կամ նոյն իսկ խիստ լի հրձուանքով , զարգացումի այն վայրկեաններէն ուր հոգին հասած այնքան կատարեալ ներդաշնակութեան մը որ միայն լուծուելու կը ձգտի :

Մեր անհատական կարծիքը հաշուի չառնուիր ուրեմն , որովհետեւ ի՛նչ կրնայինք ըսել եթէ ոչ . « Մարդ եւ եւ ի՛նչ որ մարդկային է ինձ անհարբեր չի բողոք » — (Homo sum et nihil humani a me alienum puto) :

ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ ԵՒ ՆՈՐՈՒԹՒՆՆԵՐ

(Տես Համալսարան, էջ 332 թիւ 11)

51. ԾԵՐՈՒԹԵԱՆ կենսաբանութիւնը. — « Համալսարան » ի Բ. Շրջանին Յրդ թիւին մէջ բացատրուած է թէ ի՞նչ է մազերու ճերմկնալու պատճառը, որ պարզապէս գործն էր գոյնակուղ (chromaphage) բջիջներու: Այդ տարրերը, տակաւին անորոշ պատճառներու ազդեցութեան տակ կը գրգռուին եւ, անգամ մըն ալ, կը ծծեն մազերուն գունաւոր սերմերը, զանոնք կամ մորթին մէջ եւ կամ գործարանաւորութենէն դուրս փոխադրելու համար. այդ եղանակաւ մազերը կը ճերմկին, յաճախ խիստ կարծ ժամանակի մը մէջ:

Ճշմարիտ է որ այս երեւոյթը կարող է առհասարակ ձերութեան այլասեռումը լուսաբանել, ու միեւնոյն հեղինակները, որոնք այդ ճամբով աշխատած էին, եւ որոնք են պ. պ. Մէչնիքօֆ, Մէսնիլ եւ Ուայպէրկ, առաջ կը տանին իրենց խուզարկութիւնները, արդէն վերոյիշեալ հետաքրքիր գիւտը ըրած էին: Միայն նկատի ունենալով այն զփուարութիւնը որ անկարելի կ'ընէ թարմ կտորներու վրայ փորձարկելը, բացարձակապէս անհրաժեշտ գիտական խուզարկութեան, գիտնականները կը հրաժարին մարդկային գործարաններէն եւ կ'ընտրեն թութակը որ միայն, այն կենդանիներու մէջ որ գիւրութեամբ ձեռք կը բերուին, կարող է ապրիլ այնքան երկար որքան մարդը:

Այդ վերջին տեսակի կենդանիներու վրայ է որ պ. պ. Մէչնիքօֆ, Մէսնիլ եւ Ուայպէրկ կարողացած են կատարել իրենց փորձերը: Կը տրամադրեն այս պահուս թութակ (chrysotis) մը, որ արուած տեղեկութիւններու համաձայն 70 էն 72 տարեկան ըլլալու է: Տարիքը ծառայած է միայն անոր տրամադրութիւնը փոխելու, որ չար դարձած է: Այլապէս, թութակը առողջ ըլլալու կերպարանքը ունի, իր փետուրները փայլուն են եւ գունագեղ՝ բնական կերպով. արու մըն է, որուն սևաական ախորժակը մինչեւ հիմա խիստ լաւ պահուած է:

Միեւնոյն տեսակէն ուրիշ հատ մը հեղինակներուն զրկուած է 1901 ի գարնանը, երբ մեռած էր ան: Անոր դիակը ձրիաբար անոնց կը արուի տիկնոջ մը կողմէ, որ

զնամ էր թուժակը 1871 ին Փարիզեան գինեվաճառէ մը : Այս վերջինը զայն ունէր երկար տարիներէ ի վեր , որ իրեն հասած էր օրիորդէ մը որ զայն պահած էր 28 տարի , ժառանգած ըլլալով այս վերջինն ալ իր կարգին ուրիշ ծեր տիկինէ մը , որուն մօտ մտերմուհի-օրիորդ մնացած էր 22 տարի եւ այդ շրջանի տեւողութեան մէջ միշտ թուժակը գոյութիւն ունեցած էր : Այնպէս որ այս ամէնը 81 տարւան համագումար մը պիտի տան , առանց հաշուելու գինեվաճառին մօտ անցած տարիները ինչպէս նաեւ թուժակին առաջին կալուածատէրին ժառանգութեան ժամանակը , մտերմուհի-օրիորդին այս վերջինին քով ծառայութեան մտնելէն առաջ :

Իր կեանքի վերջին տարիներուն մէջ , թուժակը ծեւրութեան եւ տկարութեան ակներեւ նշաններ ցոյց կուտար իր փետուրները հազուադիւր գարձեր էին , պահելով սակայն մնացածները իրենց բնական գունաւորութիւնը : Մեռնելէն քանի մը օր առաջ , թուժակը կը սնանէր միայն քիչ մը եփած բրինձով , ու հակառակ իր ռովորութեան , միշտ ու միշտ կը խմէր : Կը մեռնի գիշերը , 1901 ին՝ ապրիլի մէջ , բարեխառնութեան պատահական տկարացման մը պահուն :

Իրականատուութեան պահուն թուժակը էգ ճանչցուեցաւ : Ունէր ձուարան (ovaire) մը որուն փշտիկները (follicules) կը պարունակէին թոյլ զօղիչ հիւսկէն մը (tissu conjonctif) :

Գործարաններու մանրադիտական քննութիւնը ցոյց չի տուաւ որ եւ է մասնաւոր անբնականութիւն , եւ ո՛չ ալ որ եւ է սուր հիւանդութեան նշան , որուն կարելի ըլլար վերագրել կենդանիին մահը :

Կեդրոնական ջղային գրութիւնը մանաւանդ հեղինակներու ուշադրութիւնը կը հրաւիրէ , ուղեղին մէջ խիստ հետաքրքիր երեւոյթներով : Մինչ ծուծը եւ յետնուղեղը (cerveau) ոչ մէկ խանգարում ցոյց կուտային , ուղեղը լեցուած էր մօնօնիւկէն (mono-nucléaire) ըջիջներով , կատարելով կենսածիր (macrophage) դերը : Ջղային սարրերը կը զանազանուէին գոյներու գոյութեան զեղումով մը , այնքան առատ ծերերու եւ տարիքոտ ըստնաւորներու (չուն , ձի) ջղային կեդրոններուն մէջ : Նիսլի հիւլէնները (corpuscules de Nissl) շարուած էին անկանոն կերպով , ինչ որ յատուկ է դեռաաի թուժակներուն :

Հակառակ ջղային բջիջներու այլատեսող ախտանիշներու բացակայութեան, անոնցմէ մեծ մաս մը շրջապատուած էր ջղածիւրնիւրէ (neurophage) կամ կլոր կորիզով եւ յաճախ գունահիւրով (chromatine) հարուստ Վոննիսիֆիէտ բջիջներով :

Ջղածիւրութեան երեւոյթները լաւ ճանչցուած են ջղային կեդրոններու ախտաբանական հիւսկէնաբանութեան մէջ: Անոնք առաջ կուգան շատ մը ջղային հիւանդութիւններու եւ թունաւորումներու մէջ: Յաճախադէպ են նաեւ ծերերու եւ տարիքոտ ստնաւորներու ուղեղին մէջ եւս, ինչպէս զայդ յայտարարած է առաջին անգամ Փիւնեա: Բայց երբեք պ. Մէչնիքօֆ այնքան ջղահիւծութեան չէհանդիպած, որ բազդատելի ըլլար ծերունի թութակիւնին: Ամբողջ մասեր՝ ուղեղային կեղեւին, լեցուցած էին ջղահիւծ բջիջներու կոյտերով, որոնց միջեւ կարելի էր այլեւս ջղային բջիջ գտնել, այդ կոյտերը կազմուած էին փոփոխական թիւով մը, մինչեւ 20 եւ աւելի, ջղածիւրներով, որոնք կը բնորոշուին այն կորիզովը՝ որ զօրեղապէս կը գունաւորուի անիլինի արմատական գոյներով, եւ իրենց անգոյն կենսահիւթովը (protoplasma): Այս վերջինը կը ներկայանար ուրեմն իբր յստակ գօտի մը՝ կորիզին շուրջը:

Տիպար ջղային բջիջին ներկայութեան եւ անոր ամբողջական անհետացումին միջեւ գոյութիւն ունեցած բոլոր խազերը ամէն տարակոյս կը փարատէին թէ ուժգին ֆակուսիթոզի (բջջակերութեան) մը շուրջը կը դառնար խնդիրը: Այդ երեւոյթներու ամբողջութիւնը ցոյց կուտայ որ այդ ֆակուսիթոզը կը կայանայ ջղային բջիջին պարունակութեան աստիճանաւոր անցքին մէջ յարակից ջղահիւծերու ծոցը: Այս վերջինները ամբողջովին չեն կլաներ ջղային տարրը, հապա, ուրիշ կերպով խօսելով, զայն կը ծծեն, ինչպէս այն ջրածծիները (Acinétiens) որոնք կը մարսեն իրենց որսին պարունակութիւնը:

Միեւնոյն տեսակի պատկանող դեռատի թութակներ, ուսումնասիրուած, իբր հաստատութիւն, չէին ներկայացնիր բնաւ՝ այնքան ուժգին ջղահիւծութիւն մը:

Այս ծանօթութիւնները, որոնք պէտք ունին ապահովարար բազմապատկուելու, կը ձգտին հաստատելու ծերութեան բջջակերային (phagocyttaire) սեսութիւնը, զոր կազմած է պ. Մէչնի օ²:

52. ԿՐՕՆԱԿԱՆ սովորութիւններ եւ վարակում — Տանիմարքայի բժշկական ընկերութեան նախագահը, ինչպէս նաեւ երկրին բժշկական բարձր պաշտօնէութիւնը ստորագրած են յայտարարութիւն մը, հրատարակուած 1902 թեկտ. 20 ին, որուն համաձայն յուղորդականներու հաղորդութեան համար գործածած ընդհանուր բաժակը (calice) կը ներկայացնէ իրական վտանգներ՝ ախտերու վարակման տեսակէտով: Այս անյարմարութեան առջիւը առնելու համար, կը յանձնարարեն գործածութիւնը ուրիշ տեսակ բաժակի մը որուն եզերքները ունենան շարք մը պզտիկ գաւաթներ որոնք կարելի է, մասնաւոր մեքենականութեամբ մը, անջատարար լեցնել հաղորդութեան հեղուկով:

ԺԱՆՏԱՏԵՆԴԸ ԵՒ ՇԻՃԿԱՖՈՒԺՈՒԹԻՒՆԸ

53. -- Այս շրջանին սկզբնաւորութեան մէջ, (տես, « Համալսարան » էջ 91), մեր ընթերցողները տեղեկացուցինք այն առաջին արդիւնքներու մասին, որոնք ձեռք բերած էր Տօք. Շանթմէս հակաժանտատենդական շիճուկ մը գտնելու իր ջանքերուն մէջ:

Տօք. Շանթմէս սակայն այդքանով չէ գոհացած: Շարունակած է իր խուզարկութիւնները եւ ախտաբուժական փորձերը, որոնք իրենց բուժողական հանգամանքներով հաստատած են այն նպաստաւոր եզրակացութիւնները որոնց հասած էր սկզբնապէս՝ նշանաւոր բժշկապետը: Խընդիրը կը գտնայ շուրջը գործօն շիճուկի մը որ նուազեցնէ ժանտատենդի մահացիութիւնը այն համեմատութեամբ որ բաղդասելի ըլլայ կեղծմաշկին (diphthérie) շիճկարութեան գործածութենէն ծագած արդիւնքին:

1901 ապրիլ 1էն մինչեւ 1902ի 1 թեկտեմ. ժանտատենդի մահացութիւնը Փարիզի հիւանդանոցներուն մէջ 19, 3 առ 100 էր (մահացիութիւն մը խիստ բարձր, որ հիւանդութեան անհամեմատ ծանրութիւնը կը ցուցադրէ), Տօք. Շանթմէս, իր հիւանդանոցին մէջ, 186 հիւանդի վրայ միայն 7ը զոհ կուտար, այսինքն 3, 7 առ 100:

Շահագրգիռ է գիտնալ այդ շիճկարութեան ոչ այնքան սկար մահացիութիւն մը սալը. թերեւս աւելի հետաքրքիր է գիտնալ անոր փոքր ի շատէ անյաջողութեան պատճառները: Տօք. Շանթմէսի 186 հիւանդներէն 7ը մեռած են: Ահաւասիկ այս վերջիններուն կազմա-

բանական եւ հիւանդաբանական ունեցած իրական վիճակը : Առաջինը , երիտասարդ մը , հիւանդանոց կը բերուի ազդիքային խիստ արիւններթուլեալ մը , որ թոքատապ մը (pneumonie lobaire) կը ստանայ եւ կը մեռնի . 2^o դէպքը , քառասուն տարեկան մարդ մը հիւանդանոց կը մտնէ ու ժասպառ կաթուածով մը (fièvre typhoïde ataxo-dynamique), ունենալով միեւնոյն ատեն երկրորդ աստիճանի գաղղիական ախտ մը եւ սուր ջերմամիզութիւն մը (blennorrhagie), երեք օրուան մէջ կը մեռնի հակառակ շիճուկին , 3^o դէպքը , երիտասարդ մը բոլորովին նուաղած (coma) կը մեռնի երկու օրուան մէջ : Անդամահատութեան ատեն կը գրասնէն ժանտատենդի աւերները (lésions) եւ թարախոտ որովայնատապով (péritonite) մը որ ընդհանրացած էր առանց ազդիքային վնասումի (perforation) . 4^o դէպքը , կին մը որ ժանտատենդ ունի եւ կը ներկայացնէ որովայնային ցաւեր . վերջ ի վերջոյ կը մեռնի ազդիքային խցուածքով (obstruction) , որ յառաջ կուգայ ազիքներու միմեանց յարակցելէն , 5^o , 6^o , 7^o դէպքերուն մէջ , մահը տեղի կ'ունենայ ազիքներու ծակումով մը : Բայց այդ ծակումը հետեւանք ազիքային վէրքի մը (necrose) եւ դոյացած առաջին եօթնեակին մէջ , անհրաժեշտ կը դարձնէր շիճուկին գործածութիւնը խիստ կանուխէն : Տօք. Շանթմէս երեք դիտած չէ ազիքային ծակում այն հիւանդներու մէջ որոնք հիւանդութեան գրեթէ սկզբնաւորութեան շիճկաբուժութեան հնթարկուած էին : Ու որ եւ է անպատեհութիւն չկայ , միւս կողմէ , քանակութիւն մը շիճուկ ներարկել , հիւանդութեան վերջնական ախտանշանը (diagnostic) ըստուգելէ առաջ :

Միացնելով այն բոլոր հիւանդները որոնք այս նոր գրութեամբ դարմանուած են , որքա՛ն Փարիզ այնքան թուլուն , ուր 151 հիւանդ 13 մահ միայն տուած էին , ձեռք կը բերուի համագումար վիճակագրութիւն մը՝ 507 դէպքի եւ 31 մահի , այսինքն 6 առ 100 մահացիութիւն :

Եթէ բազրաաուի այս թիւերուն հետ այն արդիւնքները որոնք ամէնէն գոհացուցիչները նկատելու սովորութիւնը ունէինք , գերման քանակին վիճակագրութեան օրինակի համար , որ անցած տարի 9.5 առ 100 մահացիութիւն մը միայն ցոյց կուտար (929 դէպք եւ 87 մահ) , կը տեսնուի որ ժանտատենդաւորներու մահացութիւնը , որոնք

չիճկաբուժութեամբ դարմանուած են, զբալարար տկար է քան այն զոր կ'արտադրէին հին մէթոտները: Տղայոց վրայ ձեռք բերուած արդիւնքները նուազ նպաստաւոր չեն:

Փորձառական ուսումնասիրութիւնը ասպցուցած է պ. Շանթմէսի որ հակաժանտատենդական շիճուկը կենդանին ժահրին (virus) վրայ կը գործէ զայն զգայնացնելու համար, այսինքն զայն աւելի զգայուն դարձնելու բջիջներու յարձակումին մէջ, ու նաեւ թոյնին (toxine) որուն ան կը նպաստէ աւեր գործելու: Կը ներգործէ հաւասարապէս անուղղակի ճամբով, գրգռելու Ֆակոսիթներու (բջջակերներու) գործունէութիւնը, ինչպէս նաեւ այս վերջիններէրը ծնող գործարանները: Շիճուկը ուրեմն հակավարակային (anti-infectieux) եւ հակաթունային է. բայց ամէն բանէ առաջ բջջակերներու գրգռիչ մը: Իր ամբողջ ուժովը կը կոռէ՝ որպէսզի աւշային (lymphoïde) եւ միէլոիս (myéloïde) գործարանները բոլորովին չթունաւորուին եւ ատակ միան իր գրգռումներուն: Ու այս բանին համար է որ շիճուկը օգտակար է մանաւանդ հիւանդութեան սկզբնաւորութեան մէջ, ու այդ բանին համար է դարձեալ որ զօրաւոր եւ արդէն հին թունաւորման մը առջեւ պէտք է հակազդեցութիւնը զուշութեամբ առաջ տանիլ, զայն շաթահարելու (sidérer) թերութիւնը չգործել, ու տալ համեմատաբար տկար քանակութեամբ շիճուկ:

Հակաժանտատենդական շիճուկին կիրարկութեան գըլխաւոր կէտը հոս է, կիրարկութիւն՝ որ անհրաժեշտ կը դարձնէ բժշկին հիւանդութեան պայմաններուն լուրջ ծանօթութիւն մը. Պ. Շանթմէս կը կարծէ տուած ըլլալ այն սկզբունքը թէ որքան հիւանդը հիւանդ է այնքան շիճուկին ներարկումը նուազ քանակութեամբ ըլլալու է: Ձղային լուրջ արկածներու պահուն ու երբ ժանտատենդը կը սեւէ երկար ժամանակէ ի վեր, պէտք չէ արագ բուժում փնտռել, այլ տալու է, նախ, պզտիկ քանակութիւն մը որ աճեցնէ ատկուհութեան ուժերը եւ թոյլ տայ վտանգաւոր շրջանը անցնիլ:

Ֆակոսիթներու գրգռմամբ դարմանական մէթոտովը՝ բոլորովին տեսակարար ժանտատենդին, շիճկաբուժութիւնը սքանչելի կերպով կը համաձայնի ջրաբուժութեան կղանակին հետ: Երկու դարմաններու միաժամանակ կիր-

բարկութիւնները: զիրար չեն վաներ, այլ իրարու կ'օգնեն. իրենց ազգեցութիւնները իրարու չեն հարկադրեր: այլ կը ճգնին իրարու աջակցիլ:

54. ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ քանակը եւ անոնցով պահանջուած ոգին՝ զանազան սզգերու մեջ. — Աշխարհիս մէջ տարեկան առնուազն 8էն 10ը հազար վիպասանութիւն կը հրատարակուի: Ճաբոնը կուտայ 450էն 460 հատոր, Հնդկաստանը մօտաւորապէս 200, Եգիպտոսը առաւելն 12, Սիւրիան գրեթէ այդքան: Իտալիան եւ Սպանիան կուտան՝ իւրաքանչիւրը 5էն 600 վիպասանութիւն. Ֆրանսայի մէջ 600 միայն կը հաշուի ու Սկանտինավիան այդքան թիւով մը այս վերջինին հետ կը մրցի: Ռուսիան կը հայթայթէ 800 էն 1000: Անգլիան եւ Գերմանիան են որ բարձրագոյն թիւերը իրենց կը վերապահեն, 1.513 վիպասանակնն հատորներ, որոնց մէկ մասը երիտասարդական, ծախու հանուած են անգլիացի հրատարակիչներէ 1901 ին եւ գրեթէ 2000 հատորներ ալ գերմանացի հրատարակիչներէ: Կրկին տպագրութիւններ կ'աւելնան այդ թիւերուն վրայ: Անգլիա կը տպագրէ իւրաքանչիւր տարի զանազան ծաւալներով եւ տարբեր գիներով 25 ֆրանքէն սկսած մինչեւ 20 սանթիմ. իր « Ուալթէռ Սքոթ »ը, « Տիքէն »ը, « Թաքաբէյ »ը. Գերմանիան միեւնոյն բանը կ'ընէ իր « Զօֆման »ին, « Զաուֆ »ին, « Կուիմ »ին համար. Սկանտինավիան իր « Անտէրսէն »ներուն համար, եւ այլն: Հասարակ տպագրութեանց հետ կը մրցին շքեղ տպագրութիւնները, որոնք կը ճոխանան ամէնէ մեծ արուեստագէտներու նկարներով: Ոչ մէկ գրադարան այնքան ընդարձակ չպիտի ըլլար պարունակելու համար ինչ որ կը տպուի իբր գիրք՝ տասը տարւան մէջ: Գերմանիան, Միացեալ-Նահանգները, Ռուսիան, Հնդկաստանը, կրկնած են իրենց գրքային արտագրութիւնը քսան տարուան մէջ: Ճաբոնը զայն հնգապատկած է 1880 էն ի վեր: Անգլիոյ եւ Ֆրանսայի մէջ միջին թիւը գրեթէ փոխուած չէ այդ թուականէն սկսած: Կը հրատարակեն միայն ինքնաախօ վիպասանութիւններ: Յաջող թարգմանութիւնները հազուապիւտ են: Աղմկարար մէկ օրինակ մը միայն աչքի կ'իյնայ, Sienkiewiczի « Quo Vadis? »ը: Զօլան ամբողջ աշխարհէն ճանչցուած է, բայց

աւելի քիչ թարգմանութեամբ քան թէ օրաթերթերու եւ հանդէսներու յօդուածներով, որ անոր վրայ խօսած են: Զօլայէն յետոյ՝ իբր համաշխարհային հեղինակութիւն, կուգայ Թոլսթօն, բայց այդ գրագէտին հրատարակութիւններու ոռոսերէնի վաճառումը չափազանց մեծաքանակ է քան ուրիշ լեզուներով թարգմանութիւններու վաճառումը: Թարգմանութիւնը ուրեմն, առհասարակ, յաջող գործ մը չէ հրատարակիչներու համար. բայց այդ բանը նշանակելի ազդեցութիւն մը կ'ընէ բոլոր երկիրներու գրականութեան վրայ: Այսպէս է որ Ֆրանսացի վիպագիրները կ'որոշեն այն հոսանքը, որ կը մղէ կը սանի իրենց օտար մրցակիցներու մեծամասնութիւնը:

Պատմական վիպասանութիւնը սկսած է իրեն անունն ու համբաւը շինել, նմաւապէս ընկերական վիպասանութիւնը: Ամերիկայի մէջ վիպասանէն կը պահանջեն տեղական նկարագիր, գոյն, մանաւանդ ամերիկեան: Յրաւասայի մէջ իրողութեանց եւ ձգտումներու ուսումնասիրութիւնն է որ կ'ապահովէ ամէնէն լայն յաջողութիւնը այժմուան վիպասանութեան, ինչպէս Պագէնի « Լէ Օպէռլէ » ն, Պուժէի « Լ'Էթափ » ը, Էսթօնի « Լ'Էփալ » ը, Փոլ ու Վիքթոր Մաուրուի « Լը Տէգասթո » ը, Փոլ Ատամի « Լ'Անֆան ա'Օսթէուից » ը, Ժիւլ Գլաուէթի « Լը Սան Յուանսէ » ն: Գերմանիոյ մէջ թաւրոնը աւելի ուշադրութիւն հրաւիրած է քան թէ վիպասանութիւնը: Ռուսիոյ մէջ նախամեծարութիւն կը տրուի բաւական երկար վիպակներու, պատմութեան (nouvelle):

55. ԱՇԽԱՐՀԻՍ ԳՐՔԵՐՈՒ ՎԻՃԱԿԱԳՐՈՒՄԻՆԸ. — Գրքի ճարտարագործութեան ստացած ահագին ծաւալումը կարգ մը վիճակագիրներ անհանգիստ ըրած է: Հին բանաձեւը թէ « Այս վայրկեանիս Զինաստանի մէջ Զինացի մը կը մեռնի », տեղի պիտի տայ քիչ ասեմէն ուրիշ ժամանակակիցի մը. « Այս վայրկեանիս » գիրք մը լոյս կը տեսնէ տեղ մը, աշխարհիս մէջ: » Այս խնդրոյ առթիւ քանի մը թիւեր համոզիչ են: Միայն Հիւսիսային Ամերիկայի մէջ 700 միլիոն հատոր հաշուած են, որ հետեւեալ կերպով ցրուած են: Ընտանիքներու մէջ 420 միլիոն: Գիտութեամբ պարապողներու, փաստաբաններու, գրագէտներու, հնարիչներու մօտ 150 միլիոն: Գրավաճառներու եւ

հրատարակիչներու մօտ 60 միլիոն: Հանրային գրադարաններ 50 միլիոն: Լիսէնզներու եւ քոլէժներու գրադարաններ 12 միլիոն: Ուսանողներ 8 միլիոն: Այս հիման վրայ հաշուելով ընդանուր աշխարհի մէջ հետեւեալ թիւերը կը ստանանք. — Միացեալ-Նահանգներ՝ 700,000,000, — Արեւմտեան Եւրոպա՝ 1.800.000.000, — Արեւելեան Եւրոպա՝ 460.000.000, — Աշխարհի ուրիշ մասեր՝ 240.000.000: Համագումար երեք միլիար երկու հարիւր միլիոն հատոր:

Այս երեք միլիարէ աւելի գումարը այժմեան թիւն է, բայց հրատարակութիւնները իրարու կը յաջորդեն: Գերմանիան տարին 25 հազար նոր գիրք կը հրատարակէ, Ֆրանսան 13 հազար, Իտալիան 10 հազար, ինչ որ բոլոր աշխարհի համար կ'ընէ գրեթէ 75 հազար նոր գիրք տարեկան: Եթէ հաշուի առնուի որ իւրաքանչիւր գիրք միջին հաշուով հազար օրինակ կը հրատարակուի, վերը յիշուած երեք միլիարի թիւը տարեկան 75 միլիոնի նոր թիւով մը ճոխացած կ'ըլլայ:

Նուազ շահագրգիռ չէ աշխարհի մեծ գրադարաններու պարունակած հարստութիւնն ալ գիտնալ:

Փարիզ (Bibliothèque nationale)	3,000,000
Լանտրա (British Museum)	2,000,000
Սէն-Փէթրսպուրկի Կայսերական գրադարան	1,500,000
Պէրլինի գրադարան	1,000,000
Սթրասպուրկի »	700,000
Վիէննայի »	600,000
Միւնիխի »	550,000
Օքսֆորտի »	550,000
Լայպցիկի »	500,000
Գոփէնհակի »	500,000
Սթիւդկարթի »	500,000

Փարիզի ազգային գրադարանը բացի երեք միլիոն հատորներէ, ունի հարիւր հազար ձեռագիր, 4 միլիոն շքանշան (médaillé) եւ 5 միլիոն դրոշմ (estampe): Մինակ տպագրուածներու ցանկը պիտի բովանդակուի 150 (in 8°) հատորներու մէջ:



Հրատարակուած են գեղեցիկ տպագրութեամբ հետեւեալ երեք գրքոյկները, որոնք կը պարունակեն մեր ազգային կեանքէն հետաքրքիր եւ յուզիչ պատկերներ:

ՈՒԽՏ (Ա. ԲԷԼԼՈՒ-ԲԷԿԵԱՆ) գին 1 ֆրանկ

ՄԿԱ ՎԱՆ ՉՈՒՆԻՄ (ԳԻԻԼՍՏԱՆՑԻ) գին 50 սանթ.

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

ԻՐԲԵՒ ՅԱՆՑԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ


(Ա. ԲԷԼԼՈՒ-ԲԷԿԵԱՆ) գին 1 ֆրանկ

Գրքոյկներու վաճառումէն պոյսցած օգուտը պիտի յատկացուի այդ Որբերուն, Վենետիկի Մխիթարեաններու բարեհաճ կարգադրութեամբ:

Գրքոյկները գնել ուզողները գիմելու են՝

Imprimerie Arménienne, VENISE, (St-Lazare — Italie)
կամ Imprimerie B. Missac (4, rue Ortolan—PARIS)

ՅՈՒՇԱՐԱՐ ԺԱՄԱՅՈՅՑ



Այս նոր ձեւի ժամացոյցը իր արտաքին մասին վրայ ունի սպիտակ եզերք մը, որուն վրայ կարելի է նշանակել ժամերուն ճիշդ առջեւը, ժամագրութեան տեղը եւ օրը:

Դարձեալ ետեւի երկրորդ կախարիչը շինուած է սպիտակ նիւթով մը, որ կը ծառայէ երկար նօթերեւայլն գրելու, ժամագրութեանց նիւթին համաձայն:

Ժամացոյցին գինն է շղթայով եւ մատիտով

29 ֆրանք 40.Ն.Ն.Ի.Կ.

Ստանալ փափաքողները գիմելու են խմբագրութեանս:

Ա. Զ. Դ.

ՔԱՌԹ-ՓՕՍԹԱԼԻ ՍԻՐԱՀԱՐՆԵՐՈՒՆ

Այն անձինք՝ որոնք կը փափաքին ունենալ իրենց աչքսրին մէջ մտանաւորաբար Իզմիտի (Նիկոմիդիա) եւ փոքր-Ասիոյ պատկերազարդ քառթ-փոսթալները՝ թող հաճին գիմել հետեւեալ հասցէին, որմէ պիտի ստանան իրենց փոխանակած քառթ փոսթալներուն թուոյն չափ:

Հասցէ՝ Աքրահաւ 4. Կսաւճեան

Իզմիտ, (Փոքր-Ասիա) (Ismir-Turquie d'Asie)

